



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ  
ԴԱՇՏԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 2

Դաշտաքար համայնքում 2016թ-ի մարտի 17-ին, ժամը 11-ին տեղի ունեցավ ավագանու թիվ 2 նիստը: Նիստին մասնակցում էին ավագանու անդամներ.

Աբրահամ Աբրահամյան *Abraham*

Լյուդվիգ Այնազյան *Ayuz*

Արմեն Աթոյան *Armen*

Արամ Մալխասյան *Armen*

Արտակ Օհանյան *Artak*

Գյուղապետարանի առաջին կարգի մասնագետ՝ Հ. Հակոբյանը  
Նիստը նախագահում էր գյուղապետ՝ Ն.Մալխասյանը  
Նիստը քարտուղարում էր աշխ. քարտուղարի ժ/պ՝ Թ. Պետրոսյանը:

Օրակարգում

1. Դաշտաքար համայնքի ֆոնդային բյուջեում փոփոխություն կատարելու մասին հարցը.

Լսեցին օրակարգային հարցը.

Դաշտաքար համայնքի բյուջեում փոփոխություն կատարելու մասին.

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջներով՝

/Ձեկ. Ն. Մալխասյանը /

Ձեկուցողը ներկայացրեց բյուջեում փոփոխություն կատարելու անհրաժեշտության մասին հարցը

Արտահայտվեցին ավագանու անդամներ՝ Արամ Մալխասյանը և Արմեն Աթոյանը:

Լսելով զեկուցողին և արտահայտվողների կարծիքները Դաշտաքարի ավագանին որոշում է.

Որոշում N 5

Դաշտաքար համայնքի ֆոնդային բյուջեում կատարել հետևյալ փոփոխությունները.

ա / "Ոռոգման ցանցի կառուցում" գործառնական դասակարգման ծրագրի տնտեսագիտական դասակարգման հետևյալ հոդվածներից  
5113 - «Շենքեր-շինությունների կապիտալ վերանորոգում» հոդվածից -  
12 466 638 /տասներկու միլիոն չորս հարյուր վաթսունվեց հազար վեց հարյուր երեսունութ / դրամ  
5134 – "Նախագծահետազոտական ծախսեր" – 200 000 / երկու հարյուր / հազար դրամ  
հատկացնել.

09 – 1 – 1 -51 "Նախադպրոցական ուսուցում" գործառնական դասակարգման ծրագրի տնտեսագիտական դասակարգման 5112 «Շենքեր-շինությունների շինարարություն» հոդվածին՝ 12 666 638 /տասներկու միլիոն վեց հարյուր վաթսունվեց հազար վեց հարյուր երեսունութ / դրամ:  
Ճշտված պլանը սահմանել՝ 12 666 638 /տասներկու միլիոն վեց հարյուր վաթսունվեց հազար վեց հարյուր երեսունութ / դրամ:

~ Որոշումն անցավ միաձայն.

Աբրահամ	Աբրահամյան	<i>Abrahamyan</i>
Լյուդվիգ	Այնազյան	<i>Aznanyan</i>
Արմեն	Աթոյան	<i>Athoyan</i>
Արամ	Մալխասյան	<i>Malchasyan</i>
Արտակ	Օհանյան	<i>Ohanyan</i>

Ավարտելով հաստատված օրակարգի հարցերի քննարկումները՝ համայնքի ղեկավարը հանդես եկավ հայտարարությամբ և նիստը հայտարարեց փակված:



*Malchasyan*  
*Athoyan* • Ն.Մալխասյան  
• Թ. Պետրոսյան